Ա Կ Տ 23-Ա

19.06.2017թ. ք. Հրազդան

ՀՀ ֆինանսների նախարարի 02.05.2017թ.-ի թիվ 23-Ա և 25.05.2017թ.-ի թիվ 27-Ա հանձնարարագրերի համաձայն նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչությունը՝ գլխավոր վերահսկողներ Շավարշ Խալաթյանի (խմբի ղեկավար), Արմեն Բաբաջանյանի, Տիգրան Բաբայանի, Բաբկեն Հովսեփյանի, Արիստակ Տոնոյանի, Կարեն Մարտիրոսյանի, Կարապետ Պետրոսյանի, առաջատար վերահսկող Մելիք Երոյանի, ճարտարագետ-շինարար Ստյոպա Ավետիսյանի և տնտեսագետ Թոռնիկ Սիմոնյանի միջոցով, ՀՀ Կոտայքի մարզպետարանում իրականացրեց 2014-2016թթ. և 2017թ. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության, ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից հատկացված միջոցների հաշվին նախատեսված ծախսերի կատարման իսկության, նպատակայնության և արդյունավետության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ստուգում:

Ստուգման աշխատանքներին մասնակցել են ՀՀ Կոտայքի մարզպետ՝ Կ. Գուլոյանը (նշված պաշտոնում աշխատում է 02.04.2015թ-ից, մինչ այդ՝ 08.05.2014-02.04.2015թթ. ընթացքում աշխատել է Ա. Հարությունյանը, իսկ 18.01.2001-08.05.2014թթ.՝ Կ. Շահգալդյանը), մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ՝ Լ. Պետրոսյանը (նշված պաշտոնում աշխատում է 30.06.2015թ-ից) և մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լ. Նահապետյանը (նշված պաշտոնում աշխատում է 02.08.2007թ-ից):

Ստուգումը սկսվել է 03.05.2017թ-ին և ավարտվել է 09.06.2017թ-ին:

Ստուգմամբ ընդգրկվել է 2014-2016թթ. և 2017թ. հաշվետու ժամանակաշրջանը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 19.09.2002թ. թիվ 1790-Ն որոշմամբ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմ՝ պետական կառավարչական հիմնարկը պետական ռեգիստրի Հրազդանի տարածքային բաժնում գրանցվել է 14.01.2003թ., գրանցման համարը՝ 33.180.01568, վկայականի համարը՝ 01 Բ - 000375, ՀՎՀՀ՝ 03014577:

Ստուգմամբ պարզվեց.

ՀՀ 2014-2017 թվականների պետական բյուջեներով և ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն, 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն և 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշումներով ՀՀ Կոտայքի մարզպետարանին նախադպրոցական կրթության ծրագրով հատկացված գումարների բաշխման վերաբերյալ

2014-2016թթ. ընթացքում նախադպրոցական կրթություն ծրագրերի ստուգմամբ պարզվեց, որ 2014թ. թվով 12 հանրակրթական դպրոցներին հատկացվել է 34693.4 հազ. դրամ, 2015թ. թվով 12 հանրակրթական դպրոցներին հատկացվել է 44167.5 հազ. դրամ, 2016թ. թվով 22 հանրակրթական դպրոցներին հատկացվել է 57701.0 հազ. դրամ, իսկ 2017թ. 1-ին եռամսյակում թվով 22 հանրակրթական դպրոցներին՝ 13074.7 հազ. դրամ:

Հատկացված գումարների ճշտության ստուգմամբ պարզվեց, որ խախտելով <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տարիքային սահմանափակումը՝ ***<<ավագ նախադպրոցական տարիք՝ 5-ից մինչև 6 տարեկան>>*** երեխաների ավել թվի ներկայացման արդյունքում 2014-2017թթ-ի ընթացքում հանրակրթական դպրոցներին ավել գումար է հատկացվել **8609.6** հազ. դրամի չափով, որից 7809.4 հազ.դրամը ենթակա է

վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 800.2 հազ.դրամը ենթակա է վերահաշվարկման և նվազեցման վերը նշված ծրագրով 2017թ. համար նախատեսված գումարներից (ՀՀ Կոտայքի մարզպետարանին 2014-2016թթ. և 2017թ. 1-ին եռամսյակում նախադպրոցական կրթություն ծրագրով ավել հատկացված գումարների վերաբերյալ հավելված 5,6,7,8 կցվում է):

Հանրակրթական դպրոցների (ՊՈԱԿ) պահպանման, նախահաշիվների կազմման ճշտության վերաբերյալ

Ստուգվող ժամանակաշրջանում ՀՀ Կոտայքի մարզպետարանին ենթակա թվով 90 դպրոցներից ստուգող խմբի կողմից ընտրվել են 300 և ավելի աշակերտ ունեցող և միևնույն բնակավայրում ոչ միակ դպրոցները:

Արդյունքում ընտրվել և փաստացի ստուգվել են թվով 39 դպրոցներ:

Նշված դպրոցների 2013-2014թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի, 2014-2015թթ., 2015-2016թթ. ուսումնական տարիների և 2016-2017թթ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասամատյաններով և հրամանագրքերով հաշվառված աշակերտների փաստացի թվաքանակների և հաստատված տարիֆիկացիաներով ներկայացված աշակերտների թվաքանակի համեմատությունից պարզվեց, որ թվով 18 դպրոցների գծով տարիֆիկացիաներով ավել աշակերտներ չեն ներկայացվել, իսկ թվով 21 դպրոցներում առկա են աշակերտների թվաքանակի տարբերություններ:

Ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

h/h	Կազմակերպության անվանումը	2014		2015		2016		2017	Տարբերություն	
		Հունվար	Սեպտեմբեր	Հունվար	Սեպտեմբեր	Հունվար	Սեպտեմբեր	Հունվար	Ավել	Պակաս
1	Աբովյանի թիվ 2 հիմ./դ	0	0	0	0	0	0	0	0	0
2	Աբովյանի թիվ 5 հիմ./դ	0	0	0	+10	0	+1	0	+11	0
3	Աբովյանի թիվ 7 հիմ./դ	+5	+1	+3	0	+1	0	0	+10	0
4	Աբովյանի թիվ 8 հիմ./դ	0	0	0	0	0	-1	0	0	-1
5	Աբովյանի թիվ 10 հիմ./դ	0	-1	+1	0	0	0	0	+1	-1
6	Բյուրեղավանի հիմ./դ	0	0	0	0	0	0	0	0	0
7	Արամուսի մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
8	Առինջի մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
9	Բալահովիտի մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
10	Գառնիի թիվ 1 հիմ./դ	0	0	0	+1	+1	+1	+1	+4	0
11	Գեղաշենի մ/դ լեռ.	0	0	0	0	0	0	+3	+3	0
12	Կոտայքի մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
13	Ջրվեժի մ/դ	+5	+2	+1	+1	+8	-5	-1	+17	-6
14	Եղվարդի թիվ 2 հիմ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
15	Եղվարդի թիվ 3 հիմ/դ	0	0	0	0	0	0	-6	0	-6
16	Արգելի մ/դ	0	-1	-1	0	0	0	0	0	-2
17	Նոր-Հաճընի թիվ 1 հիմ./դ	+3	0	-1	-1	0	0	0	+3	-2
18	Նոր-Հաճընի թիվ 3 հիմ./դ	0	0	+1	0	0	0	0	+1	0
19	Նոր-Հաճընի թիվ 4 հիմ./դ	0	0	0	0	0	0	0	0	0

20	Նոր-Գեղիի թիվ 1 մ/դ	-1	0	0	0	0	0	0	0	-1
21	Նոր-Գեղիի թիվ 2 մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
22	Պռոշյանի մ/դ	0	+1	0	0	0	0	0	+1	0
23	Քանաքեռավանի մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
24	Քասախի թիվ 1 մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
25	Քասախի թիվ 2 մ/դ	-3	0	-6	0	0	0	0	0	-9
26	Զովունու մ/դ	0	+5	+4	-9	-3	+3	+5	+17	-12
27	Արզականի մ/դ	0	0	0	0	0	0	0	0	0
28	Լեռնանիստի մ/դ բ/լ	0	0	0	0	0	0	0	0	0
29	Հրազդանի թիվ 2 հիմ./դ լեռ.	0	0	0	+1	+1	0	0	+2	0
30	Հրազդանի թիվ 5 հիմ./դ լեռ.	+5	0	0	0	0	0	0	+5	0
31	Հրազդանի թիվ 7 մ/դ լեռ.	0	0	0	0	-1	0	0	0	-1
32	Հրազդանի թիվ 8 հիմ./դ լեռ.	0	0	0	0	0	0	0	0	0
33	Հրազդանի թիվ 11 հիմ./դ լեռ.	0	0	0	0	0	0	0	0	0
34	Հրազդանի թիվ 12 հիմ./դ լեռ.	0	0	0	0	0	0	0	0	0
35	Հրազդանի թիվ 14 հիմ./դ լեռ.	0	0	+3	0	0	0	0	+3	0
36	Չարենցավանի թիվ 2 հիմ./դ	0	-1	+4	0	0	0	0	+4	-1
37	Չարենցավանի թիվ 4 հիմ./դ	0	0	0	0	0	0	0	0	0
38	Չարենցավանի թիվ 5 հիմ./դ	0	0	0	0	0	0	0	0	0
39	Չարենցավանի թիվ 6 հիմ./դ	0	0	+1	0	0	0	0	+1	0
Ընդամենը /+/ /-/		+18	+9	+18	+13	+11	+5	+9		
		-4	-3	-8	-10	-4	-6	-7	+83	-42

Աշակերտների միջին տարեկան թվաքանակի հաշվարկով վերը նշված թվով 39 դպրոցներից 2014թ. համար թվով 6-ում հայտնաբերվել է ավել ներկայացված աշակերտների թվաքանակ, որի հետևանքով 2014թ. ավել է ֆինանսավորվել **640.7** հազ. դրամ (տես կից հաշվարկը):

հազ. դրամ

N/N	Դպրոցի անվանումը	Համաձայն տարիֆիկացիայի		Մարզպետարանի կողմից փաստացի ընդունվել է ֆինանսավորման			ընդամենը ֆինանսավորում	Ստուգմամբ արձանագրվել է			Էնթակում է վճարման	Ավել վճարում
		հունվար	սեպտեմբեր	հունվար	սեպտեմբեր	միջին տարեկան		հունվար	սեպտեմբեր	միջին տարեկան		
1	*Աբովյանի թիվ 7 հիմ./դ*	*895*	*913*	*890*	*913*	*898*	*106228*	*890*	*912*	*897.3*	*106195.7*	*32.3*
2	Ջրվեժի մ/դ	895	961	893	961	916	110602.8	890	959	*913*	110306	*296.8*

3	**Զովունիի միջնակարգ դպրոց**	584	586	584	586	585	74291.1	584	581	*583*	74074	*217.1*
4	**Նոր-Հաճընի թիվ 1 հիմ./դ**	417	445	414	445	424	51080.7	414	445	*424.3*	51080.7	*0*
5	**Պռոշյանի մ/դ**	673	691	673	689	678	84560.1	673	690	*678.7*	84619.3	*0*
6	**Հրազդանի թիվ 5 հիմնական դպրոց**	353	339	349	339	346	45534.1	348	339	*345*	45439.6	*94.5*
	Ընդամենը	**3817**	**3935**	**3803**	**3933**	**3847**	**472296.8**	**3799**	**3926**	**3841.3**	**471715.3**	**640.7**

Աշակերտների միջին տարեկան թվաքանակի հաշվարկով վերը նշված թվով 39 դպրոցներից 2015թ. համար թվով 11-ում հայտնաբերվել է ավել ներկայացված աշակերտների թվաքանակ, որի հետևանքով 2015թ. ավել է ֆինանսավորվել **1859.7** հազ. դրամ (տես կից հաշվարկը):

հազ. դրամ

N/N	Դպրոցի անվանումը	Համաձայն տարիֆիկացիայի		Մարզպետարանի կողմից փաստացի ընդունվել է ֆինանսավորման			ընդամենը ֆինանսավորում	Ստուգմամբ արձանագրվել է			ենթակա է վճարման	Ավել վճարում
		հունվար	սեպտեմբեր	հունվար	սեպտեմբեր	միջին տարեկան		հունվար	սեպտեմբեր	միջին տարեկան		
1	***Աբովյանի թիվ 5 հիմ./դ***	534	598	534	589	552.3	66132.9	534	589	552.3	66132.9	0.0
2	***Աբովյանի թիվ 7 հիմ./դ***	899	958	908	958	924.7	113985.4	896	958	916.7	113161.7	823.7
3	***Աբովյանի թիվ 10 հիմ./դ***	1,439	1,629	1439	1629	1502.3	178890.8	1438	1629	1501.7	178798.4	92.4
4	***Գառնիի թիվ 1 հիմ./դ***	644	664	644	664	650.7	82156.4	644	663	650.3	82110.2	46.2
5	**Ջրվեժի մ/դ**	946	1010	946	1010	967.3	120326.8	945	1009	966.3	120201.2	125.6
6	**Հրազդանի թիվ 2 հիմ./դ լեռ.**	287	317	287	317	297.0	39528.8	287	316	296.7	39494.3	34.5
7	**Հրազդանի թիվ 14 հիմ./դ լեռ.**	302	331	299	331	309.7	58969.7	299	331	309.7	58969.7	0.0
8	**Նոր Հաճնի թիվ 3 հիմնական դպրոց**	353	397	352	397	367.0	46808.5	352	397	367.0	46808.5	0.0
9	**Զովունիի միջնակար**	578	583	578	583	579.7	75983.1	574	592	580.0	77423.2	0.0

	գ դպրոց											
10	**Չարենցավանի թիվ 2 հիմնական դպրոց**	375	439	371	439	393.7	50077.1	371	439	393.7	50077.1	0.0
11	**Չարենցավանի թիվ 6 հիմ./դ**	335	381	334	380	349.3	44396.7	334	381	349.7	43659.4	737.3
	Ընդամենը	**6692.0**	**7387.0**	**6692.0**	**7297.0**	**6893.7**	**877256.2**	**6674.0**	**7384.0**	**6884.1**	**876836.6**	**1859.7**

Աշակերտների միջին տարեկան թվաքանակի հաշվարկով վերը նշված թվով 39 դպրոցներից 2016թ. համար թվով 6-ում հայտնաբերվել է ավել ներկայացված աշակերտների թվաքանակ, որի հետևանքով 2016թ. ավել է ֆինանսավորվել **3807.6** հազ. դրամ (տես կից հաշվարկը):

հազ. դրամ

ՀՀ	**Դպրոցի անվանումը**	Համաձայն տարիֆիկացիայի		Մարզպետարանի կողմից փաստացի ընդունվել է ֆինանսավորման			ընդամենը ֆինանսավորում	Ստուգմամբ արձանագրվել է			ենթակա է վճարման	Ավել վճարում
		հունվար	սեպտեմբեր	հունվար	սեպտեմբեր	միջին տարեկան		հունվար	սեպտեմբեր	միջին տարեկան		
1	***Աբովյանի թիվ 5 հիմ./դ***	*582*	*626*	*582*	*626*	*596.7*	*73428.9*	*582*	*625*	*596.3*	*73395.5*	*33.4*
2	***Աբովյանի թիվ 7 հիմ./դ***	*945*	*987*	*963*	*987*	*971.0*	*121102.3*	*944*	*987*	*958.3*	*119637.1*	*1465.2*
3	***Գառնիի թիվ 1 հիմ./դ***	*668*	*704*	*693*	*704*	*696.7*	*87633.0*	*667*	*703*	*679.0*	*85434.5*	*2198.5*
4	**Զովունիի միջնակարգ դպրոց**	*592*	*591*	*592*	*591*	*591.7*	*77411.0*	*595*	*588*	*592.7*	*77527.5*	*0.0*
5	**Ջրվեժի մ/դ**	1010	1020	1010	1020	*1013.3*	126967.7	1002	1025	*1009.7*	126926.6	*41.1*
6	**Հրազդանի թիվ 2 հիմ./դ լեռ.**	313	345	313	345	*323.7*	43672.9	312	345	*323.0*	43603.5	*69.4*
	Ընդամենը	**4110**	**4273**	**4153**	**4273**	**4193**	**530215.8**	**4102**	**4273**	**4159**	**526524.7**	**3807.6**

Աշակերտների միջին տարեկան թվաքանակի հաշվարկով վերը նշված թվով 39 դպրոցներից 2017թ. առաջին կիսամյակի համար թվով 3-ում հայտնաբերվել է ավել ներկայացված աշակերտների թվաքանակ, որի հետևանքով 2017թ. համար ավել է ֆինանսավորվել **512.8** հազ. դրամ (տես կից հաշվարկը):

հազ. դրամ

N/N	**Դպրոցի անվանումը**	Համաձայն տարիֆիկացիայի	Մարզպետարանի կողմից փաստացի ընդունվել է ֆինանսավորման	ընդամենը ֆինանսավորում	Ստուգմամբ արձանագրվել է	Ենթակա է վճարման	Ավել է վճարվել

		Հունվար	Հունվար		Հունվար		
1	***Գեղաշեի միջնակարգ դպրոց***	*512*	*509*	*68421.6*	*509*	*68421.6*	*0*
2	**Զովունիի միջնակարգ դպրոց**	*591*	*588*	*76718.3*	*586*	*76252*	*466.3*
3	***Գառնիի թիվ 1 հիմնական դպրոց***	*691*	*691*	*87072.3*	*690*	*87025.8*	*46.5*
	Ընդամենը	**1794**	**1788**	**232212.2**	**1785**	**231699.4**	**512.8**

Այսպիսով՝ փաստորեն խախտվել են <<**Հայաստանի Հանրապետության 2014-2017թթ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին**>> ՀՀ կառավարության որոշումների (19.12.2013թ.N1414-Ն, 18.12.2014թ. N 1515-Ն, 24.12.2015թ. N 1555-Ն, 29.12.2016թ. N 1313-Ն) 7-րդ կերտի 2-րդ և 3-րդ ենթակետի պահանջները, որի արդյունքում թվով 26 դեպքով արձանագրվել է **6820.8** հազ. դրամ (640.7+1859.7+3807.6+512.8) ավել ֆինանսավորված գումար: Նշված գումարից 6308.0 հազ.դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 512.8 հազ.դրամը ենթակա է վերահաշվարկման և նվազեցման վերը նշված ծրագրով 2017թ. համար նախատեսված գումարներից:

ՀՀ 2015-2017 թվականների պետական բյուջեներով և 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն և 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշումներով ՀՀ Կոտայքի մարզպետարանին ներառական կրթության ծրագրով հատկացված գումարների բաշխման վերաբերյալ

2015-2017թթ. ընթացքում ներառական կրթություն ծրագրերի ստուգմամբ պարզվեց, որ 2014թ. ներառական կրթություն ծրագրով գումարներ չեն նախատեսվել և չեն հատկացվել, 2015թ. թվով 5 հանրակրթական դպրոցներին հատկացվել է 29870.4 հազ. դրամ, 2016թ. թվով 6 հանրակրթական դպրոցներին հատկացվել է 53762.2 հազ. դրամ, իսկ 2017թ. 1-ին եռամսյակում թվով 8 հանրակրթական դպրոցներին՝ 9579.3 հազ. դրամ :

Հատկացված գումարների ճշտության ստուգմամբ պարզվեց, որ խախտելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.08.2010թ. <<***Ներառական կրթություն իրականացնելու կարգը հաստատելու մասին***>> թիվ 1281-ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջները՝ (այն է՝ <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթական կարիքը բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից ենթակա է գնահատման յուրաքանչյուր 2 տարին մեկ, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հաստատման նպատակով: Ծնողի և ուսումնական հաստատության դիմումի համաձայն՝ սովորողի կրթական կարիքը կարող է վերագնահատվել ավելի վաղ ժամկետներում>>) 2015-2017թթ-ի ընթացքում առանց բժշկահոգեբանամանկավարժական գնահատման եզրակացությունների կամ նշված եզրակացությունների ուշացման պայմաններում երեխաները ընդգրկվել են ներառական կրթության ծրագրում, որի արդյունքում հանրակրթական դպրոցներին ներառական կրթություն ծրագրով ավել գումար է հատկացվել **3708.7** հազ. դրամի չափով (614.1+617.6+2477.0), որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե (ՀՀ Կոտայքի մարզպետարանին ներառական կրթություն ծրագրով հատկացված գումարների վերաբերյալ հավելվածներ 9,10,11 կցվում է):

Բացի վերը նշվածից 2015-2017թթ-ի ընթացքում հանրակրթական դպրոցների կողմից ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումար փաստացի չի տրամադրվել, որի արդյունքում տնտեսված կամ չծախսված **10350.2** հազ. դրամը (2583.6+3733.4+4033.2) ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե (ՀՀ Կոտայքի

մարզպետարանին ներառական կրթություն ծրագրով հատկացված գումարների վերաբերյալ հավելվածներ 12,13,14 կցվում է):

Արդյունքում՝ 2015-2017թթ. ընթացքում ներառական կրթություն ծրագրերի ստուգմամբ արձանագրված 14058.9 (3708.7+10350.2) հազ. դրամից 7548.7 հազ.դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 6510.2 հազ.դրամը ենթակա է վերահաշվարկման և նվազեցման վերը նշված ծրագրով 2017թ. համար նախատեսված գումարներից:

ՀՀ 2014-2017 թվականների պետական բյուջեներով և ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն, 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն և 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշումներով ՀՀ Կոտայքի մարզպետարանին հատուկ կրթության ծրագրով հատկացված գումարների բաշխման վերաբերյալ

2014-2016թթ. ընթացքում հատուկ կրթություն ծրագրերի ստուգմամբ պարզվեց, որ 2014թ. թվով 2 դպրոցներին հատկացվել է 98477.3 հազ. դրամ, 2015թ. թվով 2 դպրոցներին հատկացվել է 105458.2 հազ. դրամ, 2016թ. թվով 2 դպրոցներին հատկացվել է 105153.1 հազ. դրամ, իսկ 2017թ. 1-ին եռամսյակում թվով 2 դպրոցներին՝ 19253.3 հազ. դրամ:

Դասամատյաններով և հրամանագրքերով հաշվառված աշակերտների փաստացի թվաքանակների և հաստատված տարիֆիկացիաներով ներկայացված աշակերտների թվաքանակի համեմատությունից պարզվեց, որ <<Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 օժանդակ դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա են աշակերտների թվաքանակի տարբերություններ:

Արդյունքում՝ 2014-2015թթ. ընթացքում <<Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 օժանդակ դպրոց>> ՊՈԱԿ-ին ավել է ֆինանսավորվել 640.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե (ՀՀ Կոտայքի մարզպետարանին 2014-2016թթ. և 2017թ. 1-ին եռամսյակի ընթացքում հատուկ կրթություն ծրագրով հատկացված գումարների վերաբերյալ հավելված 15,16,17,18 կցվում է):

Այսպիսով, սույն ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1. Հանրակրթական ուսուցում ծրագրով ստուգված թվով 39 դպրոցների գծով ստուգմամբ արձանագրվել է **6820.8** հազ. դրամի ավել ֆինանսավորված գումար, որից 6308.0 հազ.դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 512.8 հազ.դրամը ենթակա է վերահաշվարկման և նվազեցման վերը նշված ծրագրով 2017թ. նախատեսված գումարներից:

2. Ներառական կրթություն ծրագրով ստուգված հանրակրթական դպրոցների գծով ավել գումար է հատկացվել **14058.9** հազ. դրամ, որից 7548.7 հազ.դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, իսկ 6510.2 հազ.դրամը ենթակա է վերահաշվարկման և նվազեցման վերը նշված ծրագրով 2017թ. նախատեսված գումարներից:

3. Հատուկ կրթություն ծրագրով 2014-2015թթ. ընթացքում <<Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 օժանդակ դպրոց>> ՊՈԱԿ-ին ավել է ֆինանսավորվել **640.3** հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

Ակտում արձանագրված խախտումները և թերությունները վերացնելու և այդպիսիք հետագայում թույլ չտալու նպատակով առաջարկում ենք

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների և իրավական ակտերի պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին **22306.4** հազ. դրամ (7809.4+6308.0+754807+640.3) ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե, իսկ ավել նախատեսված **7823.2** հազ.դրամի չափով (800.2+512.8+6510.2) վերահաշվարկումը և նվազեցումը ՀՀ Կոտայքի մարզպետարանին 2017թ. նախատեսված գումարներից:

2. Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջեի 900005280640 գանձապետական հաշվին: